



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՍԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. Երևան

27 մարտի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Վիկտոր Բաղդազյուլյանի անհատական դիմումով
գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Վիկտոր Բաղդազյուլյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015 թվականի մարտի 10-ին)՝ խնդրելով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասով, 407-րդ հոդվածի 5-րդ մասով և 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված նորմերը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1, 14.1., 18 և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության շրջանակներում, ճանաչել իրավական որոշակիության սկզբունքին հակասող և անվավեր:

1. Ըստ դիմողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասը մեկնաբանելիս ՀՀ վճռաբեկ դատարանը «փոխել է օրենսգրքի կողմից նշված իրավական նորմում ամրագրված իմաստը, տալով դրան, այլ՝ օրենքի որոշակիության հետ չհամընկնող իմաստ»՝ առաջացնելով յուրաքանչյուրի՝ վճռաբեկ դատարանում հանդես գալու իր սուբյեկտիվ իրավունքն անձամբ իրացնելու խոչընդոտ, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի՝ օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ տրված մեկնաբանությունը խաթարում է արդարադատության բուն էությունը, դրանով հակասում է օրենքի որոշակիության սկզբունքին՝ ձևավորված իրավակիրառ պրակտիկայում նույնականացնելով հասարակ քաղաքացուն դիմողի կարգավիճակ ունեցող փաստաբանի հետ, փաստաբանից պահանջելով բողոքը ներկայացնել փաստաբանի միջոցով:

Դիմողը նաև գտնում է, որ քաղաքացուն պարտադրելով վճռաբեկ բողոքը ներկայացնել **միայն փաստաբանի միջոցով**՝ խախտվում է մարդու համապարփակ իրավունքը՝ չբողոքելով նրան ընտրության իրավունք:

Դիմողն իր դիմումում ներկայացրել է նաև այլ փաստարկներ:

Դիմողը միաժամանակ ներկայացրել է միջնորդություն իրեն պետական տուրքի վճարումից ազատելու մասին:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, դատական կազմը գտնում է, որ առկա են դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր՝ հետևյալ պատճառաբանությամբ.

դիմողի կողմից վիճարկվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասի, 407-րդ հոդվածի 5-րդ մասի, 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի սահմանադրականության վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2015թ. մարտի 17-ի ՍԴՈ-1196 որոշումը, որի եզրափակիչ մասի համաձայն.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասը՝ դատավարության այն մասնակիցների մասով, ովքեր չունեն պաշտպան և որոնց համար օրենքով սահմանված կարգով երաշխավորված չէ անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորությունը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն է առաջացնում անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, չապահովելով նաև անձի արդար դատաքնության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքների լիարժեք իրացումը:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին և երկրորդ նախադասություններում ամրագրված դրույթները՝ վճռաբեկ բողոքը ստորագրելու պահին պաշտպան չունեցող և օրենքով սահմանված կարգով անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու հնարավորություն չստացած դատավարության մասնակիցների մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր՝ նկատի ունենալով, որ տվյալ դրույթի կիրառումն առկա իրավակարգավորումների պայմաններում բացառում է նշված անձանց կողմից իրենց օրինական շահերը ներկայացնելու համատեքստում վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունը:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասի երրորդ նախադասությունում ամրագրված՝ «վճռաբեկ բողոքին կցվում է նաև վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը)» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1192 որոշան մեջ նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում»:

Հետևաբար, առկա է գործի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Քաղաքացի Վիկտոր Բաղդազյուլյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

27 մարտի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/2-14